

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գլխավոր են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелік».
Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցիւզով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խմբագրութիւնը առաւօտեան 10 կոպէկ.
Տէլեֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՎԻԿԻ

Կիրակի, ամսին 22-ին, ս. պատարագից յետոյ, 12 ժամին, Վանքի աւագ-եկեղեցում կատարվելու է քառասնօրեայ հոգեհանգիստը Աւագ քահանայ Սարգիսի կողակցի.

ԵՓԵՍՍԱ ՄԵԼԵՈՅԵԱՆ ԽԱՐԱԶԵԱՆԻ

Ուստի հանգուցեալի վշտացեալ ախարհը եւ զաւակները խնդրում են բարեկամներին եւ ծանօթներին յարգել հանգուցեալի իշխատակը իրանց ներկայութեամբ: 1—1

ԲՆԿԱՆԳԻՐԻԹԻՒՆ

Գործելու ընդունակութիւն.— ԵՆՐԻՆ ՏԵՍՍՈՒՅԻՆ. Մի աշակերտական ճանապարհորդութիւն. Հայոց ներկայացումները Օպերային ներկայացումները. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՍՈՒՅԻՆ. Արաւելին լուրեր.— ՀԵԼԵԱՅԻՐ-ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱՅԻՆ. Պարսից Շահը եւ ս. Ղազար:

ԳՈՐԾԵԼՈՒ ԸՆԴՈՆԱԿՈՒԹԻՒՆ

Մենք միշտ գանգատվում ենք, թէ մեր գաւառում անկարելի է խոշոր եւ արդիւնաւէտ գործաւարտութիւն ունենալ գէմստօրի կամ տեղական ինքնավարութեան բացակայութեան պատճառով: Մեր երկրորդ կէտը, որ մեզինք իւրաքանչիւրը շատ գործ ունի անելու, շատ ծրագիրներ ունի իրագործելու, շատ ոյժ ունի երեսան հանելու, բայց նա այդ չէ անում, որովհետեւ նա կաշկանդված է եւ սահմանափակված է իր գործունէութեան մէջ: Անկասկած գեմստօրն ունի իր մեծ, անուրանալի եւ նպատակաւոր ազդեցութիւնը տեղական գործունէութիւնը զարգացնելու հարցում: Սակայն մենք ինքներս յաճախ չենք օգտվում այն դէպքերից, երբ մեզ ապարկել է տրված գործելու, եւ ցոյց ենք տալիս անտարբերութեան ու անկարողութեան մի շարք ապացոյցներ: Մեզ համար, օրինակ, գործունէութեան մի որոշ ապարկել է բացված քաղաքային ինքնավարութեան, գիտական ընկերութիւնների եւ բարեգործական հաստատութիւնների մէջ: Եւ ի՞նչ էր մենք տեսնում: Շատ քիչ գործ, շատ սահմանափակ արդիւնք:

ԲԱՆԱՍԻՐԱՅԻՆ

ՊԱՐՏԻՑ ԾԱՀԸ ԵՒ Ս. ՂԱԶԱՐ

Ներկայ տարւոյս մայիսի մէջ երբ պարսից Շահը Լոնտոն երթալու եւ Եղեալը էի թագաւորութեան ներկայ գտնուելու համար եւ թագաւորին իրաւունք հասցաւ, նախ Վենետիկի գալով «Տոմարի» թագաւորական պալատին: Պարսից թագաւորին գրեթէ չառաջ մ'առաջ հռովմայ մէջ լիազօր պարսկական դեսպան եւ զոչ Հայկազն Մելքում խանը Վենետիկ եկած էր եւ իշխալ պանդոկին ամենընտիր յարկը վարձած էր. եւ իւր վեհապետին համար պատրաստած:

Մայիս 14-ին Ռ. խոսիս Արհապատու Աբրահայր այդ Վաղեմի Միթրաիան աշակերտին այցելութեան գնաց: Միտրաի եւ մտերմական ընդունելութեանը միջոց կը պարզէր թէ ինչ հարկեր են ինչ հոգի ունին պարսիկ Շահը մեր ազգայնոց վրա եւ թէ ինչ ոճով ինքը եւ այլ ազգային խմբերը կը ջանան անոնց համար: Այսպէս Վաղեմի մեր արեւնակցաց նկատմամբ:

Ազնուամեծար խանը յաջորդ օրը՝ յետ միջօրէին՝ իրեն միակ Ուրդոյն եւ ուրիշ դեսպանով մը՝ փոխադարձ այցելութեան եկաւ՝ ի Ս. Ղազար թէպէտեւ ուրիշ երկու անգամ ալ եկած էր մեր վանքը, այնու հանդերձ ախորժեկով այ-

Մեր քաղաքների մէջ արդէն գործում է ինքնավարութիւնը, բայց շատ քիչ քաղաք կայ մեր երկրում, ուր բարեկարգ վիճակ ստեղծած լինի իր համար, որ ունենար լաւ սալալատական փողոցներ, ջրաբաշխութիւն, կոյուղիների սխտեմ, ելեքտրական կամ նոյն իսկ գազային լուսաւորութիւն, կատարելագործված սպանդանոցներ, հրդեհաշէջ լաւ խմբեր եւ այլն: Մենք տէր ենք մեր քաղաքներին եւ սակայն շատ քիչ բան ենք իրագործում:

Այդ բաւական չէ: Դեռ այն փոքրիկ լաւ բաներն էլ, որ կատարված են եւ կատարվում են, մենք անկարող ենք լինում գնահատել: Երեւանում, օրինակ, կազմվել է ընտրողների շրջանում մի ստուար խումբ, որը անբաւական է վերջին տարիների ընթացքում գործողների փոքր խումբի բաւարար գործունէութիւնից եւ ջանքեր է գործ դնում ոյժ տալու այն ապրիւրներ, որոնք քաղաքային հողերը խնդրելով էին զբաղված եւ իրանց մասնաւոր անձնական հաշիւներով էին ղեկավարվում ամեն մի գործում:

Նայելէք մեր գիւղատնտեսական ընկերութիւններին: Նրանք որքան գործ կարող էին կատարել մեր երկրի հողագործի, այգեգործի, անասնապահի եւ առհասարակ գիւղատնտեսի համար: Իսկ իրապէս այնքան քիչ են գործում, որ շատ անգամ մենք մոռանում ենք նրանց գոյութեան մասին:

Վաղը, կիրակի, Թիֆլիսում եւ Երեւանում տեղի կունենան ձայնաւորների ընտրութիւններ: Յանկալի է, որ ընտրողների, հետեւ պահելով իրանց նեղ անձնական նկատմաներից, իրանց քուէները տային այն անձանց, որոնք կարող են իսկապէս

ցելեց գրատունը, միւղէն, եկեղեցին, բնական գիտութեանց դասիժը, ապարանը, եւ այլն: Կրկին եւ կրկին խոստացաւ առաջնորդել Շահը-Նահը հայկական որմնոր մէջ.— Վստահ եմ թէ շատ պիտի ախորժի եւ համարմունքը պիտի կրկնապատկի Հայոցս վրա, երբ նորին վեհափառութիւնը այս սեմէն ներս մտնէ. կըսէր Մելքում խան:

Մելքում խան կարեւոր տեղեկութիւններ տուաւ թէ ինչ ոճով հիւրընկալելու էինք յառաջդիմաւոր Վեհապետը, որ կախորժի արեւելեան եւ մասնաւոր՝ պարսկական իրեղծներ, պարսից մասին հրատարակութիւններ տեսնել օտար աշխարհներու մէջ: Ուստի պատուիրեց մեզ ի ցոյց դնել այն ամէն ջանքանքները, գործերը, ձեռագործները, եւ գրութիւնները, եւ այլն՝ որոնք արեւելեան էին:

Ազնուամեծար ծերունին ինքզինքը երախտագէտ աշակերտ եւ որդի կանուանէր Միաբանութեան եւ ընտանեւար կը խօսակցէր ամենուն հետ: Իրեն մեծ օրոյն եւ երախտագիտութեան անհաւատելի կանուխ ժամանակներէ ի վեր ցուցուցած էր, վախճանալ Նաւրեմի Շահին՝ մեր նախորդ լուսաւորի Գեորգ Հիւրմիւլ Աբրահայր համար, Ասիւծի եւ Արեւու երկրորդ գաւառ: Կայսերական ակադեմիա չքանչաւ ընդունելով՝ հանդերձ գեղատեսիլ պարսկերէն հրովարտակով մը՝ որոնք մեր ձեռագրատան մուտքին երկու կողմը կախուած կը ըլլան: Եւ որոնք հեռաքրքրաշաղկաւ առարկաներ դարձած են վանքին այցելու օտարականաց:

օգտակալ գործողներ լինել քաղաքային տնտեսութեան աւաջալիմութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՅԻՆ

ՄԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի 13-ին Թիֆլիսի իգական առաջին գիմնազիայի 8-րդ, 9-րդ մասնագիտական դասարանների պատմութիւն ուսանող աշակերտուհիները իրանց տեսչուհու, ուսուցիչների, ուսուցչուհիների, կրօնուսուցիչների ու բժշկի հետ, թուով ջառատուն հողի, կատարեցին փոքրիկ ուսումնական ճանապարհորդութիւն դէպի Լոռու: Այնպէս զիտելու եւ տեղն ու տեղը ծանօթանալու տեղական հիմնաւոր շահաւոր վանքերի եւ պղնձ հանքերի հետ:

Ուրբաթ երեկոյեան երկաթուղու գնացքով ճանապարհեցինք դէպի Սանահնի կայարանը, ուր եւ գրչերեցինք: Միւս օրը, շաբաթ առաւօտեան, ճանապարհ ընկանք, ոմանք ոտքով, ոմանք գիւղական սայլակներով եւ բարձրացանք Աշտիկեղու պղնձ հանքը, որ կայարանից եօթը վերստի չափ հեռու է եւ գտնվում է Լալվար կոչված սարի ստորոտում, ձորագնացի մի բլրի զօշի վրա: Այստեղ սիրալի ընդունելութիւն եղաւ պղնձ հանք արդիւնաբերող ֆրանսիական ընկերութեան կառավարչի եւ նրա օգնականի կողմից, որի տանը պատրաստված էր ճոխ սեղան: Այստեղ անցկացրինք ամբողջ օրը եւ պ. հանքարան-ճարտարապետը դատարանով ծանօթացրեց աշակերտուհիներին պղնձ հանքի արդիւնաբերութեան մանրամասնութիւնների եւ մեքենաների հետ, ցոյց տալով եւ ստորերկրեայ անցքը, որից ստանում են պղնձ հանքը: Երեկոյեան վերադառնալով Սանահնի կայարանի մօտ կանգ առած յառուկ երկաթուղական վագոնում գրչերեցինք:

Հետեւեալ օրը՝ կիրակի, առաւօտեան ժամը 8-ին, ճանապարհ ընկանք դէպի հոշակաւոր հիմնաւոր Սանահնի վանքը կարճ, բայց դժբաւարանքների ճանապարհով: Հետաքրքիր էր տեսնել, թէ ինչպէս աշակերտուհիները ուրախ, զուարթ, եռանդով իրար առաջ կտրելով՝ թըռչկոտում էին այդ քաղաքների վրայից, որ շուտ հասնեն վանքին:

Ժամը 9 1/2-ին արդէն վանքում էին: Այստեղ նոյնպէս սիրով ընդունելութիւն եղաւ վանքի վանահայր արքայան հօր կարգադրութեամբ, թէեւ ինքը բացակայ էր, եւ հիւրա-

սիրվեցանք թէյով, կաթով, ձուով, մածնով, կարագով եւ համեստ նախաճաշիկ ուտելով մատաղի մօրից: Այնուհետեւ տողերիս զորող՝ առաջնորդ ունենալով հանգուցեալ Սարգիս արքայական Ջալալեանի «Ճանապարհորդութիւն Մեծն Հայաստան» գրքովը, ցոյց տուեց բոլոր հնութիւնները, պատմեց վանքի ամեն մի մասի սկզբնաւորութիւնը, ժամանակի ընթացքում եղած նորոգութիւնները, նրա նշանակութիւնը եւ կատարած դերը 12, 13 եւ 14 դարերում որպէս նշանաւոր ուսումնավայր: Մասնագրեց մասունքների հետ եւ կարգաց շատ արձանագրութիւններ հայոց թագաւորների, իշխանների եւ ակաւաւոր եկեղեցականների դամբարանների վրա, այլ եւ Դաղքաւանի հոգաւոր հերոս իշխան Մովսէս Ջաղքաւան Երկաթուղու-Արդուութեան գերեզմանի վրա, որոնք գտնվում են վանքի գաւիթ կոչված մասում: Աշակերտուհիները ամեն ինչ հետաքրքրութեամբ զիտելով՝ շատ մասեր վանքի տեսարանից, քանդակներ, խաչքարեր, գերեզմաններ նկարեցին եւ լուսանկարչական գործիքով հանեցին: Միանգամայն գոհ սրտով հեռացանք վանքից՝ տանելով մեզ հետ շատ ախարհ յիշատակներ անցեալից:

Սանահնից յետոյ նոյն օրը գնացինք Ախտալայի օ. Մարիամ Աստուածածնի վանքը, որ նոյնանուն երկաթուղու կայարանից չորս վերստ հեռավորութիւն ունի եւ չինված է մի քարաբլրի վրա, ուր կայ ուս հոգեւոր միաբանութիւն: Այստեղ վանահայրը, որ մի երկտաւոր մարդ է եւ շատ նախաճախնիք վանքի նորոգութեան, սիրով ընդունեց, հիւրասիրեց թէյով եւ ապա անձամբ առաջնորդելով ծանօթացրեց աշակերտուհիներին վանքի պատմութեան եւ հնութիւնների հետ: Այս վանքը նշանաւոր է իր արտաքին տեսքով, գեղեցիկ կամարներով եւ նուրբ քանդակագործութեամբ: Աշակերտուհիները երգեցիկ խումբ կազմելով՝ մասնակցեցին երեկոյեան ժամագրութեան եւ երգեցին ամեն ինչ ջառանգալ եւ ներդաշնակ իօկոյն միաքա ընկան Ներսիսեան դպրոցի սաները, որոնք եկեղեցում փոխ տեսլ անգամ չը գիտեն եւ ոչ թէ երգել: Ինչ հիացում էր ճանապարհորդութեան ժամանակ այն օրինաւոր եւ վայելուչ կարգապահութիւնը, որ տիրում էր ճանապարհորդութեան ժամանակ այդ խմբի մէջ: Չը նայելով որ ամեն աղանակից տարված էր աշակերտուհիներին, սակայն նկատվում էր ամենքի կողմից ընդհանուր յարգանք

տութեանց ծաղկեցուցիչ եւ արեւեալից. ու հատկութեանց զարգացուցիչ առաջնորդը՝ իր վարժարաններու մէջ գիտութեանց ծաւալմանը եւ ուսման միջոցներ հնարելու վերջի աստիճան հոգ կը տանի, եւ իր կարողութեանը ներածին չափ ամէն երկրի մէջ ուսանողներու դաստիարակութեանը առատասիրտ ձեռնուղութիւն կընէ, եւ նկատմամբ Օսմանեան բարձր տէրութեանը՝ (որ Իրանեան մեծագոր տէրութեան հետ մասնական միութեան մէջ զբաղվելու պատճառով՝ երկուքը մէկ տէրութիւն կը սեպվին), հաւաքարտութեան ու տիրաւորութեան պայմաններուն գործադրութեանը ամենեւին անհոգութիւն ու անփոյթութիւն չընէր. ու՝ խղճմամբէն իսկ յորդորված՝ մասնատակաւ տէրութեանց հպատակներուն յառաջադիմութիւնը պատշաճ կը սեպէ, բարձրագագաւ, մեծաշուք եւ չեղաչուք, ուշիմ եւ մտացի, մեր յաւերժական պետութեանը արքունական տանը ուսանիկներէն Միւրզա Մելքէմ խան, գնդապետ էլ թաւաթ օռնի եւ ագոթ ուտան մեծազօր արքայի, ու տէրութեան մասնաւոր թարգման, որ յիշեալ վարժարաններուն աշակերտներէն մէկն է, շատ անգամ վերոյիշեալ Միաբանութեան անձերուն մասնատակաւ հպատակներու համար ըլլած օգտակար ջանքը ու դուլիլի ծառայութիւնը մեզի իմացուցած ըլլալով՝ մեր արքունական առատաբարոյ սրտին կարեւոր երեւցաւ՝ զի յիշեալ Առաջնորդին մասնաւոր շնորհք մը առատաձեռն ենք յայտնաբերել:

